

ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

Հ. Յ. Գ. ՏՈՒՆԸ

Քսան բոսկ գնացով համարդուքին Փարիզի Հիսիսային Կայաքանից դէպի Անգիէն — լէ — Բէն: Քսան բոսկ էլ հետիտուն Անգիէնի կայաքանից դէպի Կեանքերի ծառաստանը՝ Մոմմորանսի, եւ ահա, բարձունքի վրա, Բասըրոն փողոցի քիւ 16 — 18-ը, ուր Գերասիմ Բալայեանը — Մոմմորանսիի վանականը — ժպտերես ընդունում է ձեզ: Հ. Յ. Գ. Տունն է, Սիամի երկորեակների պէս իրար կալած, երկ — յարկանի երկու համետ — շէնքեր՝ Հ. Յ. Գաշնակցութեան Դիւանն ու Թանգարանը:

Դիւանը հաստատւած է 1935-ին, Թանգարանը՝ 1936-ին, Ամերիկայի երիտասարդ դաշնակցական գործիչ Ա. Վանաբեանի կտակած 5000 տոլարի գումարով: Գրեթէ ամէն կիրակի, իսկ ամառը նոյն իսկ ամէն օր այցելուներն անպակաս են այստեղ: Կուսիք — խումբ եւ առանձին ուխտի են գալիս այս նուիրական վայրը. երկիրազնութեամբ պտտում սենեակները եւ գոտեպնդած գնում են իրենց համբան: Գալիս են Փարիզից եւ արարձաններից. գալիս են Փարիզի վերայով անցնող համարդուքները, որոնց սրտին մօտ է հայ ազատագրական շարժումը: Մի պտոյտ գործենք եւ մենք՝ Տան արքուն պահակ Գ. Բալայեանի ստաջնորդութեամբ:

Առաջին տունը յատկացւած է Մատենադարանին: Գեոմայարկի սենեակները բերնէ բերան լեցւած են Հ. Յ. Գաշնակցութեան հրատարակութիւններ — բով եւ ծախու գանգան գրքերով ու նրկարներով: Այստեղ են եւ կենտրոնական վառարանն ու պահեստը:

Գեոմայարկի գլխաւոր սենեակը տըրամադրւած է աշխատանոցի: Այստեղ

են նստում Դիւանից եւ Մատենադարանից օգտուողները: Իրենց տրամադրութեան տակ են Տան բոլոր գրքերն ու պարբերականները, ինչպէս եւ դիւանական քրքրերը: Այստեղ են հիւրասիրւում եւ այցելուները: Պատերի տակ շարւած հաստափոր պահարանները լեփ — լեցուն են պարբերական հրատարակութիւններով:

Երկրորդ յարկի երեք սենեակները բռնւած են գրքերով ու պարբերականներով: Դժբախտաբար, գրքերի բաժինը ակնկալածի չափ հարուստ չէ: Ժամանակի ընթացքում շատ քանկագին հատորներ առնւած ու չեն վերադարձւած: Այժմ է միայն խիստ հսկողութիւն նըշանակւած: Բայց եւ այնպէս, Մատենադարանը ունի մի քանի խիստ արժէքաւոր գրքեր. յատկապէս հայ ազատագրական շարժման ներսւած: Նոր հրատարակութիւններ գրեթէ չկան: Այս մասը բոլորովին անտեսւած է, ինչ որ, ի հարկէ, մեծ քերութիւն է: Հ. Յ. Գ. Մատենադարանը պէտք է լինի Հայոց նորագոյն պատմութիւնը ընդգրկող հրատարակութիւնների շտեմարան, այլապէս իր կոչումին ծառայած չի լինի:

Հարուստ է, համեմատաբար, մամուլի մասը. համարեա բոլոր դաշնակցական քերքերը կարելի է այստեղ գտնել, բայց ոչ — դաշնակցական մասը տըրկար է, իսկ ներկայ Հայաստանի հրատարակութիւններ համարեա գոյութիւն չունին:

Մեծ քերութիւն է նաեւ քերքերի եւ պարբերականների անկազմ մնալը. 20 — 25 պահարաններում, ծալւած վիճակի մէջ, քէեւ կորստեան վտանգից գերծ, բայց ենթակայ են մթնոլորտի քայքայիչ

ազդեցութեան: Պէտք է անպատճառ կազմել տալ՝ փրկելու համար այդ քանգագին պատմական աղբիւրները փչացումից:

Ձեռնայարկը պահեստ է հին քերթերի, պարբերականների ու գրքերի՝ նոյն պէս անկազմ, կապոցների մէջ:

Տան բոլոր յարկերը — սենեակի քէ միջանցի — զարդարած են նկարներով ու փայտեւեղերով: Հայաստանն ու Դաշնակցութիւնը ձեր աչքի առջեւով անցնում են իրենց զանազան փուլերով, վայրերով, գործերով ու գործիչներով:

Երկրորդ տունը — նոյնպէս եռաշարի, սառցիկի հարսգատ պատնէնը — բռնած է Դիւանով ու Թանգարանով: Դիւանը տեղաւորւած է նկուղում: Երկարով ու շաղախով շինւած անկիզելի բնդարձակ մի սենեակ, ուր կողք — կողքի շարւած են 13 սոփաքանդակ պահարաններ: Այստեղ են պահուում Հ. Յ. Դաշնակցութեան կէս դարի ընթացքում հաւաքւած պատմական վաւերագրերը, 2825 քղթածրարների մէջ՝ կազմւած Ա. Գիւլիսանգանանի հինգ տարւայ աշխատանքով: Ինչքան է վաւերագրերի քիւր — յայտնի չէ: Յամենայն դէպս, հարիւր հազարներով պէտք է հաշուել: Թղթածրարները սկսում են 1890 քաղկանից եւ հասնում են մինչեւ մեր օրերը: Վաւերագրերը դասաւորւած են ժամանակագրական կարգով՝ ըստ վայրերի եւ մարմինների: Դժբախտաբար, դիւանական որոշ կարգ չէ պահպանւած, եւ քղթածրարները վերջնական ձեւով կազմւած չեն. մէկ քղթածրարի՝ նիւթեր ընկել են միւսի մէջ: Նիւթերը չեն համարակալւած, ըստ բովանդակութեան ցանկի չեն կազմւած. կիրառւած չէ եւ փարսային դրուքիւնը: Կատարւած է անշուշտ, կարեւոր նախնական աշխատանք, բայց գիտական իմաստով Դիւանն ունենալու համար անհրաժեշտ է հիմնապէս վերանայել եւ նոր ու վերջնական քղթածրարներ կազմել:

Այս տան միւս յարկերը յատկացւած

են Թանգարանին — Հ. Յ. Դ. Տան ամենէն խորհրդաւոր ու տպաւորիչ մասը, մանաւանդ առաջին յարկը: Երկու սենեակ իւրաքանչէր բացւած: Մտնում ես ներս եւ մի պահ կանգնում շաքարաւոր սարսուռ է պատում մարմինդ, ցնցւում ես: Բոլոր պատերից նայում են վրադ պաշտելի դէմքեր՝ մտերիմ ու հարազատ: Ամբողջ պատմութիւնը մեր հերոսական պայքարի եւ նահատակութեան: Աստուածատառքը իայ ազատագրական հերոսամարտի: Մի հեղափոխականական միջոցականով եւ անօրինակ ու վեհ:

Դիւանի դէմքերը շրջան — շրջան: Ահա մեր Մեծ Ռաիկիւրաները, նրանք, որ յղացան Հայ Գեղափոխութիւնը — Ալիշանը իր «Յամբ Որոտան»-ով, համեստ Նահապետը, որ լեզու տեղ չաւոյց Մասիսներին ու Հրազդաններին, որի մարտի գոչերով քունդ ելան հայկական սրտերը:

Ահա վարագի Արծիւր՝ Խրիմեան, Հայ Գեղափոխութեան երկրորդ հոգեհայրը, «Երկաթէ շերտի» յանդուգն գաղափարախօսը, նստած իր համբաւաւոր միւնդարի վրա, քիկն տւած հասարակայն ծառին՝ խոսում է հայկական հակառակգրի մասին:

Ահա շարքը վերածննդների՝ Խ. Աբովեան, Ս. Նազարեան, Մ. Նալբանդեան, Գ. Գալստի — Բաքիպա, «Երկաթէ Պատրիարք»-ը...

Ահա Բաքիպին — մարմնով վտիտ, բայց հսկայ հոգիի տէր յեղափոխական բուրմը, որ իր «Կայծեր»-ով վառեց Հայոց աշխարհի հրդեհը:

Առաջին շարքին յաջորդում է ռահ-վիրաների երկրորդ շարքը. խօսքն ու հառաչանքը ծնունդ են տալիս կենդանի գործին, երբ երեսակայական «Խեղճ»-երի տեղ բռնում են յեղափոխական «աւագակ»-ները: Ահա Արաբոն, Շահբադգի Յունոն, Դեմիւսի Բեդին, Յովհաննէս ու Վարդան վարդապետները: Շատերի նկարները այս շարքից դեռ չեն ցանկացւած. չկան Գոյոշեանն ու Ազիպա-

եանը, չկայ Մարգար վարժապետը, չը կայ Շամիլ — Օֆօնիան, չկան շատ — շատերը: Պէտք է որոնել, գտնել, հաւաքել ինչ որ կարելի է:

Ահա եւ յեղափոխական «առաքել»-ները, նրանք, որոնք գնում էին երկիրը ուսումնասիրելու եւ գործունէութեան յեմարաններ ստեղծելու: Այս մասն եւս ազատ է: Զաքի — Թաւազալեան, Մկ. փորթուգալեան եւ ուրիշ ոչ ոք, մինչդեռ մեծ է նրանց քիւն ու դերը:

Այս բոլորը՝ յեղափոխական երկունքի շրջանից: Ահա եւ ծնունդը վահագնեան: Մուսֆի դրան դէմ — հանդիման՝ փառաւոր երրորդութիւնը՝ Բրիտափոր, Զաւարեան, Ռոստոմ: Եւ նրանց շուրջը, մեծ ու փոքր շրջանակներով, խառն ի խառն՝ Դաշնակցութեան հիմնադիրները եւ առաջին շրջանի գործիչները — Յ. Խոսովեան, Յ. Դաւիթեան, Պետօ, Վազգէն, Արամ Արամեան, Բարկէն Սիւնի, Արթ, Գ. Ալոյեան...

Եւ ահա սփանչելի փաղանգը դաշնակցական մարտիկների՝ Ս. Կուկունեան իր ընկերներով, Սերոբ — Ազբիւր, Գեորգ Զաւուշ, Նիկոլ — Դուման, Սաֆօ, Եփրեմ, Հրայր — Դժոխք, Վարդան, Կարօ, Կրետացի, Անդրանիկ, Քեռի, Մուրատ, Փոխիկ, Գուրգէն, Խան, Թուման, Դաշնակցական Խէչօ, Զուլումաթ, Զնդօ, Մէլդօ, Պ. Սերեմեան, Տուրքախ, Աւօ, Մոկացի, Մեսրոպ, Կայծակ Ասաֆի, Կորիւն, Մնօ, Եօքնեղալեան Խնկօ, Յ. Միրաֆեան, Զեմլեակ, Յրոնիցի Մուրադ, Ալեքսան Դալի, Ա. Միրզայեան եւ բազում ուրիշներ: Եւ բոլորի մէջ, ամբողջ հասակով, Սերոբը իր կուրսներով...

Ահա հայ մոսկի փառքերը՝ դաշնակցական մտաւարակաւորներ՝ Յ. Շաքրիկ-Թիրաֆեան, Արմէն Գաթօ, Ս. Մինասեան, Ա. Վառմեան, Ե. Թովչեան, Հրեան, Մ. Վարանդեան, Մարգիս Բարսեղեան, Գ. Վարուժան, Սիւսանթօ, Ռ. Զարդարեան, Գ. Խաժակ, Վ. Խոբէնի, Մ. Թէրլէմէզեան, Գ. Բարսեղ-

եան, Ե. Ակնունի, Վ. Տաքեւեան, Գարմէն, Ա. Խարայէլեան, Կողբեցի Յարութիւն, Բ. Շահպազ, Բ. Զօրեան, Արամ, Իշխան, Մ. Ժամհարեան, Վարդգէս, Իշխ. Արդուքեան, Տ. Մամուր, Բալա ջան, Հայր Աբրահամ, Փայլակ, Պապաշա, Կ. Համբարձումեան, Հ. Նոհրատեան, Տ. Թ. Տէր — Ստեփանեան, Բժ. Յ. Զարեան, Գեղ. Տէր — Կարապետեան, Տր. Կ. Փաշայեան, Ե. Յըրանգեան — անհմար է բոլորի անունը բերել՝ այնքան շատ են նրանք:

Ահա եւ ահաբեկիչ — մարտիկներից մի քանի դէմքեր — Եգիպտացի, Մարտ. Զարուխեան, Համօ Զամբուստեան, Ա. Թողաֆեան, Բախրի փաշայի ահաբեկիչները...

Մեծ մասը՝ տղամարդիկ: Շատերը՝ զինավառ ու խրոխտ: Բայց ահա եւ կին գործիչներ ու յեղափոխական մարտիկները — Մոդիկ, Զարուհի Դերօեան, Խսկունի Թիրաֆեան, Անահիտ Մելիք — փարսաղանեան, Ուրֆայի հերոսուհիները, Շատախցի մայրն ու փոքրիկ որդին — յանդուգն սուրհանդակներ: Շատ չեն, դժբախտաբար, հայ կնոջ յեղափոխական ներկայացուցիչները մեր Թանգարանում:

Պատերիւն, մէջ ընդ մէջ, կախած են եւ խմբանկարներ եւ յեղափոխական վայրերի տեսարաններ — Խանասար, Վարազ, Աղբամար, Ս. Կարապետ, Նարեկ, Բարթուղիմէոսի վանք, Եւայլն:

Եւ բոլոր այս նկարների մէջ, ճիշտ Բրիտափորի դիմաց՝ այնպէս խորքըրդաւոր ու գեղեցիկ՝ Հ. Յ. Դաշնակցութեան սփանչելի զինանշանը՝ շինած բերդակալական քիթոնների քեւերից՝ ներքէջ. Յ. Գ. Ռիօ դէ Ժամէյրոյի Բարկէն Սիւնի խմբի...

Մարդ չի կարողանում կտրել այս ներկայական վայրից, ուզում է մնալ երկար, մտքով քափառել՝ փառաւոր անցեալում, խոկալ ու ներշնչուիլ այս նահատակ — հերոսների հոգեւոր աշխարհում... Բայց ժամանակը սահում է.

բարձրանալ վերի յարկը, ուր կողմ — կողմի դասաւորում են չորս սենեակներ չորս պաշտիկի անուններով — Բերիստափոր, Ռոստոմ, Զաւարեան, Ահարոնեան — վարանդեան: Ամէն սենեակում հաւաքուած են համապատասխան շրջանի առարկաներ — նիւթական պատմութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան:

Մամաւորապէս յուզիչ է Քրիստափորի սենեակը, որ, աւելի շուտ, տաճարի տպաւորութիւն է բողոմ: Մի անկիւնը, սեւ ֆողերի ու ծաղիկների մէջ, պատմանդանի վրա դրած է մի գանգ — մէկը բիրտարներէից — որ երիտասարդ գրող Համաստեղը հանել է Տէր Զորի անպատմներից: Անկարելի է ստացուի չգտալ ի տես այդ խորհրդաւոր անկիւնի:

Այստեղ է եւ Յովնան Դաւթեանի անիւնը — ափ մը մոխիր» — պահած տուփի մէջ, որ մի օր պիտի փոխադրի Հայաստան վերջնական հանգիստը գտնելու համար:

Դժբախտաբար, տեղն ու ժամանակը չեն ներում մէկիկ — մէկիկ քնելու բոլոր սենեակներում ամփոփած իրերը: Այստեղ տամբ ցանկը միայն մի քանիսի՝ ամբողջը բողոքելով ուխտի այցելուների՝ տեսնել ու վերադարձի ինչ որ ամենէն ներքալանն է մարդու հոգու մէջ: Ահա այդ ցանկը. —

Քրիստափորի քրոջ պանկը, ռումբի մասեր, Քրիստափորի յօրինած ռումբի կադայարը. Քրիստափորի մարմնից հանած ռումբի մի կտոր, մի տուփ հող Քրիստափորի գերեզմանից: Արամի գինւորական հագուստը՝ գործած վասպուրականում եւ Նրեւանում: Դաշն. ինչոյի մարմնից հանած կապարէ ձուլւած ոսկի շրջանակով մատանի: Վարդգէսի ժամացոյցը շղթայով, վանի բանտում հիւսած մետաքսաբել դրամապանակ, վարդգէսի 1907-ի յուշատետրը: Արմէն Գաբայի ինքնահոս գրիչը եւ փոքրիկ ատրճառակը: Անդրանիկի դաշմանը եւ գրելին: Բաֆֆի ժամացոյցի ոսկի

շղթան: Բաբկէն Սինիի ժամացոյցի շղթան: Ակնունքի ժամացոյցը, անցագիրը: Զաւարեանի գլխարկը, գրչակոբը, բարձրաչափ — կողմնացոյցը: Ռ. Զարդարեանի արծաթէ ծխատուփը, գրչակոբը: Սեբաստացի Մուրատի արծաթէ ծխատուփը՝ նուէր ստացած Շուշում, 1905-ին: Վազգէնի արծաթէ գրչակոբը եւ յուշատետրը: Նգիպտացիկի պատրաստած ոսկիէ մի օղակ: Շարափ բէլի երկու շխմանները՝ առնւած համաստրում: Հայկական դրոշմաբույրների և դրամների հաւաքածուներ: Դաշնակցութեան տաշին կնիքը: Ռոստոմի ճամբորդական քանաքանակներ: Նիկոլ — Դումանի կաշիէ ծխատուփը: Անդրանիկի գործածած դաշոյնը: Վ. Տաքեւեանի արծաթէ լուցկիի տուփը: Իշխան Արդուրեանի հեռադիտակը, ակնոցները եւ ժամացոյցը: Դաշն. ինչոյի հեռադիտակը: Քեսիկի հեռադիտակը: Տուրբախի հեռադիտակը: Հայ. Հանր. կառավարութեան պզնէ կնիքը: Ներքին ոսկէ ժամացոյցը: Յ. եւ եւ Յար. Դաւթեանների մատանիները: Յ. Խաւփեանի ադամանդէ մատանին: Քրիստափորեանի ոսկի ժամացոյցը: Կ. Համբարձումեանի մատանին: Գ. Վիշապեանի գրիչին: Խաժակի ինքնահոս գրիչը: Վանի Իշխանի ժամացոյցը: Սաֆայի համարիչը: Պապաշայի Քրիստափորից նւէր ստացած ժամացոյցը: Հ. Յ. Դ. Ամբիկայի Կ. Կ.-ի նւիրած ոսկէ զինանշանը Մ. Վարանդեանին: Ա. Ահարոնեանի գրասենեակի կարասիները, Մեւրի դաշնագիրը ստորագրած գրիչը, Հ. Յ. Դաշնակցութեան նւիրած ոսկէ գրիչը: Պատուհանի երեք վարագոյրներ Սամաքիայի հերոսամարտի օրերից՝ Միսաքեանների տնից: Մի տուփ հող Հայաստանի մայրաքաղաք Նրեւանից...

Կարելի չէ քնել բոլորը, ոչ էլ արտայայտել մարդու կրած անօրինակ ապուրմանը այս սրբազան Տաճարից:

Պէտք է տեսնել, անձամբ զգալ այդ բոլորը: Փարբիզից անցնող աւէն Հայ, որի հոգում դեռ չէ մարած վահագնեան կրակը, պէտք է այցելէ Հ. Յ. Գ. Տունը, որտեղից դուրս կը գայ հոգեպէս վերածնւած, հպարտ եւ նոր յոյսերով վառւած...:

— Զի բազում գործք արուրեան կան եւ ի մերում աշխարհի:

Մեր պատմահայր Մովսէս Խորենացիի այս խօսքերն են, իբրեւ խորհուրդ խորին, գրած Հ. Յ. Գ. Թանգարանի մուտքի դրան վրա:

Ս. Վ.Ր.

ՅՈՒՆԵՍԿՆԵՐԻ ԱՌԹԻԻ

Յորեկանի մասին... Պէտք է յորեկաններ տօնել, քէ ոչ: Այս հարցի շուրջ կան տարբեր կարծիքներ մեր հասարակութեան մէջ:

Հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է, նախ, նշտել, քէ ի՞նչ յորեկանների մասին է խօսքը՝ անհատների, քէ գործերի, դէպքերի ու հիմնարկութիւնների: Վերջինների նկատմամբ չենք կարծում, քէ տարակարծութիւն լինի — ի հարկէ, պէտք է: Պէտք է տօնելին ու այն էլ համազգային համադիտութեամբ տառերի գիւտի, Թարգմանչաց, Աստածաշունչի քարգամաւորեան եւ նման մեծ դէպքերը: Եւ պէտք է տօնել համազգային ու փայլուն շուքով նաեւ Սասունցի Դաւթի հազարամեակը: Այս կարգի տօներն ու հանդէսները ծառայում են ազգի մտաւոր ու բարոյական մակարդակի բարձրացման, իսկ մեր օրերին՝ նաեւ ազգապահպանութեան հրամայական պահանջին:

Կարծիքները սկսում են տարբերել, երբ խնդիրը վերաբերում է անհատների յորեկանին. ումնք, առհասարակ, ժխտում են նման յորեկանների կարեւորութիւնը, ուրիշներ՝ հակառակն են պնդում: Այստեղ էլ, մեզ քուտ է, հարկաւոր է որոշ գնազանութիւն դրնել: Պէտք է տարբերել մեռածներին ողջերից. մեռած մարդիկ, իրենց գործերով, սեփականութիւն են պատմութեան եւ պէտք է դիտւին, որպէս այդպիսին: Եւ քէ կան ազգի մեծութիւնը որոշող խոշոր դէմքեր, որոնք իրենց հոգե-

կան ու մտաւոր վաստակով նշխարել են ազգային կեանքը, որոնց վերջիշումը այսօր էլ կարող է զարկ տալ ազգային վերելքին — ինչո՞ւ չտօնել այդպիսիների յորեկանը: Մի՞ նարեկացի, մի՞ Բուչակ, մի՞ Սայաթ — Նովա, մի՞ Խըրիմեան, մի՞ Բաֆֆի, մի՞ Թումանեան, մի՞ Կոմիտաս եւ շատ ուրիշ երեսիլի դէմքեր՝ հայ ստեղծագործ համաւորի հսկաները արժանի են յաջորդ սերունդների յարգանքի եւ երախտագիտութեան, եւ յորեկեանկան հանդէսը լաւագոյն միջոցն է մեր զգացմունքների արտայայտութեան եւ միաժամանակ նրանց անունի օգտագործման յօգուտ ազգային դատի: Բաւական է յիշել, քէ Բաֆֆիի ծննդեան հարիւրամեայ տարեդարձի հանդիսութիւնները ինչպիսի՞ բարերար ազդեցութիւն ունեցան Արտահայաստանի հայութեան կեանքի վրա:

Խնդիրը հիմնովին փոխում է, երբ խօսքը գալիս է ապրող անհատների յորեկանին: Մեզ մօտ ընդունւած սովորութիւն է աչ ու ձախ յորեկաններ կազմակերպել ապրող մարդկանց մասին, յաճախ տաճնց հաշի առնելու անհատի արժէքն ու արժանիքը, որով յորեկանի նշանակութիւնն էլ նահանգում է: Յորեկանը հանրային երախտագիտութեան ու յարգանքի արտայայտութեան բարձրագոյն ձեւն է. միայն բացառիկ արժանիքի տէր անձեր արժանանում են նման գնահատութեան, եւ այդ պատճառով ֆաղափսկիրք աշխարհում խիստ սակաւ են նման յորեկանները: Ամէն